ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 19-Ա

06-002-0108-0043 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ 0.27 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.03 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Սոս Վանիչկայի Մոսինյանի դիմումը, անձնագրերի պատճենները, ժառանգության իրավունքի վկայագրերը, 20.01.1988թ. տեխնիկական անձնագիրը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, «ԹԻՎ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 20.12.2019թ. տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Սոս Վանիչկայի Մոսինյանին, Ալինա Հմայակի Մոսինյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0108-0043) բնակելի տան և 0.27 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, համասեփականության իրավունքը:

2. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0108-0043) բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, փողոց 7, N 3 փոստային հասցե:
3. Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 1991 թվականին կառուցված բնակելի տունը, բաց պատշգամբը, մառանը, պարիսպը և տնամերձ հողամասից ավել օգտագործվող, սահմանազատված 0.03 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Սոս Վանիչկայի Մոսինյանի (ծնված՝ 23.11.1979թ.) և Ալինա Հմայակի Մոսինյանի (ծնված՝ 08.12.1954թ.) համասեփականությունը:
4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հունվարի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 18-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ, 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 03.03.2011թ, N 186-Ն, 17.09.2009թ. N 1066-Ն որոշումներով, հիմք ընդունելով Սոս Վանիչկայի Մոսինյանի դիմումը, անձնագրերի պատճենները, ժառանգության իրավունքի վկայագրերը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01.12.1993թ. N 20/9 որոշման քաղվածքները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը **որոշում եմ՝**

1. Սոս Վանիչկայի Մոսինյանին (ծնված՝ 23.11.1979թ.) և Ալինա Հմայակի Մոսինյանին (ծնված՝ 08.12. 1954թ.), ժառանգության իրավունքով պատկանող (ծածկագիր՝ 06-002-0310-0024) և (ծածկագիր՝ 06-002-0310-0039) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի գործառնական նշանակությունը փոփոխել որպես խոտհարք:
2. Վերականգնել Սոս Վանիչկայի Մոսինյանին և Ալինա Հմայակի Մոսինյանին ժառանգության իրավունքով պատկանող 0.03651 հա (ծածկագիր՝ 06-002-0310-0024) և 0.03198 հա (ծածկագիր՝ 06-002-0310-0039) գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը.
3. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասերի հատակագծերով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հունվարի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 17-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 39-րդ, 60-րդ հոդվածներով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Սոս Վանիչկայի Մոսինյանի դիմումը, անձրագրերի պատճենները, ժառանգության իրավունքի վկայագրերը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01.12.1993թ. N 20/9 որոշման քաղվածքները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Վերականգնել Սոս Վանիչկայի Մոսինյանին (ծնված 23.11.1979 թ.) և Ալինա Հմայակի Մոսինյանին (ծնված 08.12.1954թ.) ժառանգության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ հողհատկացման հիմքերը, համասեփականության իրավունքը.

   1.1 06-002-0310-0018 ծածկագրի տակ գտնվող 0.20305 հա 3 -րդ կարգի խոտհարքի նկատմամբ.

1.2 06-002-0308-0017 ծածկագրի տակ գտնվող 1.11187 հա 3-րդ կարգի խոտհարքի նկատմամբ.

1.3 06-002-0093-0048 ծածկագրի տակ գտնվող 0.11263 հա 4-րդ կարգի վարելահողի նկատմամբ.

1.4 06-002-0113-0020 ծածկագրի տակ գտնվող 0.17337 հա 4-րդ կարգի վարելահողի նկատմամբ.

1.5 06-002-0070-0003 ծածկագրի տակ գտնվող 0.08837 հա 3-րդ կարգի վարելահողի նկատմամբ.

2. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասերի հատակագծերով:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. հունվարի 24

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 16-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 12.12.2019թ. թիվ 0-40 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/4 շենքի հարավային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 51.5 քմ արտաքին մակերեսով (48.6 քմ ներքին մակերեսով) ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/4 շենքի հարավային մասում գտնվող, 2004 թ. ինքնակամ կառուցված, 51.5 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00515 հա մակերեսով հողամասով:
3. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/4 շենքի հարավային մասում գտնվող ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/4-15/1 փոստային հասցե:

4. Ավտոտնակի զբաղեցրած 0.00515 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Մանե Համլիկի Վանյանին, օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. հունվարի 23
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 15-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍՆ ՈՒ ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ մասերով, 18.05.2006թ. № 912-Ն որոշման 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի տան մասն ու աստիճանահարթակը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Ռուբեն Վրեժի Հովհաննիսյանի դիմումը, սեփականության իրավունքի N 25122019-06-0054 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Օրինականացնել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Բաղրամյան թաղամաս N 20 հասցեում գտնվող, Ռուբեն Վրեժի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող, բնակելի կառուցապատման 0.08317 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 2012թ. ինքնակամ կառուցված՝ ընդհանուր 88.89 քմ արտաքին մակերեսով (87.9 քմ ներքին մակերեսով) բնակելի տան մասն ու աստիճանահարթակը:
2. Օրինականացման համար սահմանված 97779 (իննսունյոթ հազար յոթ հարյուր յոթանասունինը) դրամ վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինության զբաղեցրած 0.08317 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում:
4. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հունվարի 23
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 14-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Նորայր Վահանի Վարոսյանի դիմումը, անձնագրի պատճենը, առք ու վաճառքի պայմանագիրը, սեփականության իրավունքի N 873994 վկայականը, Ծաղկաշատ գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված 21.01.2020թ. տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը **որոշում եմ՝**

Նորայր Վահանի Վարոսյանի կողմից առք ու վաճառքի պայմանագրով ձեռք բերված, Լոռու մարզի Ծաղկաշատ գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Ծաղկաշատ, փողոց 9, N 13 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հունվարի 23
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թվականի N 13-Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի N 4-Ն որոշումը ***որոշում եմ՝***

1. Հաստատել Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1, 2/:
2. Հաստատել Ալավերդի համայնքի բյուջեի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների /հավելված 1, 4/:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հունվարի 22
ք. Ալավերդի